ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1905 թուականն էր։

Այն տարաբաղդ տարին, երբ դարերից ի վեր Կովկասում ապրող հարեան ազգերը, ինչ որ չար ոգու դրդմամբ, խելքները կորցրած՝ ջարդում էին իրար և աւերում միմիանց տները։

Ես ապրում էի Կալուգա նահանգի մի խուլ գիւղում։

Հինգերորդ տարին էր, որ ես այդտեղ էի։ Միակ հայերը, որոնց ես տեսնում էի, դա շրջակայ փոքրիկ քաղաքներում հատիկ հատիկ ընկած աքսորական հայերն էին։

Զէք կարող երևակայել թէ որքան ուրախութիւն էր մեզ համար, երբ մենք երբեմն երբեմն հաւաքւում էինք միասին. այդ պատահում էր մեծ մասամբ Զատկի և Ծննդեան տօներին։

Որքան քաղցր էր մեզ համար մայրենի լեզուն, որքան անուշ էր մեզ համար հայրենի յիշողութիւնները, ի՜նչ անյագ փափագով ստանում ու կարդում էինք հայ թերթերը։

Պատահեց մի անգամ հէնց այդ 1905 թւին, Սմոլենսկի մօտ մի գիւղաքաղաք էի գնացել, մոռացել եմ անունը, անցնումէի փողոցով, տեսնում եմ գանձակեցի թուրքի մի տիպիկ դէմք։

Մօտեցայ և հարցրի թէ ո՞րտեղացի է և ի՞նչ է շինում այդտեղ։

Թուրքը մի բոպէ շւարած, երեսիս նայեց. և յետոյ արտասուքը աչքերին՝ փաթաթւեց ինձ։

Աղա, հինգ տարի է այստեղ եմ և ոչ ոքին չեմ տեսել մեր կողմերից. ոչ ոքի հետ չեմ խօսել մեր լեզուով. այդ քեզ ո՞րտեղից Աստուած հասցրեց։

Աքսորւած էր. ինարկէ է ոչ քաղաքական։ Միրգ էր ծախում և մի կերպ գլուխը պահում։ Տարաւ իր մօտ. ստիպեց թէյ խմել. փլաւ եփեց և ուրախութիւնից չգիտէր ինչ անել։

Մինչև երեկոյ խօսումէինք։ Պատմում էինք դարդերս իրար։

Յիշումէր հայրենիքի գեղեցկութիւնը, նրա պտղաբեր հողերը, նրա այգիները, քաղցրահամ մրգերը և ջրերը...։

Հեռացանք իրրև մտերիմներ։ Որքա՜ն քաղցր էր մեզ համար մեր հայրենիքը, որքան քաղցր էր հնչում ամէն մէկիս ականջին իւր մայրենի խօսքը...։

Իսկ հեռուն... բուն հայրենիքում մեր եղբայրները իրար միս էին ուտում, իրար տուն էին քանդում։

Ինչո՞ւ...

Ի՞նչ էին արել իրար։

Ի՞նչ ունէին իրար մէջ բաժանելու։

Այո՛, օտարութեան մէջ միայն, հեռու օտարութեան մէջ, ուր ոչ մի խօսք չեն լսում դու քո մայրենի լեզուով, ոչ մի դէմք, ոչ մի գծագրութիւն չէ յիշեցնում քեզ քո հայրենիքը. այդտեղ միայն դու զգումես թէ որքան թանգ է քեզ համար մայրենի լեզուն, հայրենի յարկը, նրա սուրբ օջախը...։

Անցան տարիներ՞...։

Յիշեցի նորից ես այդ օրերը, երբ մեզ մօտ էլ Ատրպատականում, իմացայ որ պատրաստւում են հայ գլի և տպագրութեան մեծ յօբելեանները տօնելու։

Եւ գիտէք ինչո՞ւ։

Ինչո՞ւ, մտածում էի ես, մենք մեր տանը, մեզ մօտ այնքան անփոյթ և անհոգ կերպով դէն ենք շպրտում մեր ամենից թանգագին գանձը, մեր լեզուն, որը այդքան մեծ ջանքերով և զոհերով մեր նախնիքները մեզ են աւանդել։

Մենք նայում ենք և նայումենք բոլորովին սառն ու անտարբեր թէ ինչպէս մեր մատաղ սերունդը, մեր երիտասարդութիւնը աւելի և աւելի օտարանումէ, խորթանում է իւր մայրենի լեզուից։

Ինչո՞ւ։

ԱԲԵԼ ԱՊՐԵՍԵԱՆ.